67. ՊՈՉՈՒ ԽԱՓԱՌ

Կէղին, չէղին իրիկ ու կնիկ մե կէղին։ Ըդ կնկան դոստ կէղի։

Օրին մեկ իրիկ ու կնիկ ներս պառկուկ կէղնին, դոստ գիգա ղդուռ չխկչխկացու։ Կնիկ գելի գողտու կէրթա դոստի խեչ, կըսե.

— Էդ իմա՞լ կէղի, իրիկս հանդե խեչս պառկուկ է։

Կըսե.— Հնարկ մե չը՞ս կրնա գտնա։

Կըսե.— Հմալ է, դու մտի իդա տեխ, քունջ տեխ մի, դու մտի օր չտեսնի զքըզի։

Կդառնա։ Կդառնա կըսե.— Մա՞րթ, մա՞րթ, աստված քու տուն ավիրա, պառկեր ես, քներ ես, գելն էկի ղքավորոշ սելն ա տարի, դու էկեր ես պառկեր ե՞ս։

Ըսաց.— Կնի՛կ, կնի՛կ, օր հըմալ ա թոմրանսի տուր հագնիմ, վաղիմ։

Ջուր տուն ավիրեց։

Կնիկ կուրխընա, զթոմրան լէ, հալավն լէ կիտա էրկան, չէ՞ օր, սիրտ ի բան է, ապա խո քեշ բան չէ՞, կխնդանա ու կճամփցու։

Գելնա ֆուքարեն կվաղե, ձուն, բուք, կվաղե կէրթա քավորոշ երթիքեն կբոռա.

— Քավոր, քավոր, հ՛ելի, գիլան տարան զքու սել։

Քավոր լէ կվերցու կըսե.— Աստված քու տուն ավիրե, գիլանք զսել կտանի ի՞նչ կէնե, զփեստ ի՞նչ կէնե, նա օչխար է, նա տավար է, օր տանե ուտե։ Կըսե.— Դու պոզու խափուկ իս, հայ, հարիֆ, զքըզի անգետ։

Կըսե.— Աստված լէ հախ է, օղորթ է, գիլանք սել ի՞նչ պտի էնին։

Նոր կմեղե։ Գելի կվազի, գիգա ուր դուռ։ Կշխկշխկացու զդուռ. «Կնի՛կ, կնի՛կ, զդուռ բաց»։

Կնիկ պառկե յաթղի մեջ, ուր դոստի խեչ, հո՞դ էրի զֆուքարե էրիկ։ Կնիկ կբոռա.

— Էն վո՞ն է, քոփակ, հարիֆ, ծո՞ւռ է, իմ իրիկ հանդե իմ խեչ, հ՚որի՞ ինչխ, ընձի ուրիշ իրի՞կմ լէ կա։

Կդառնա խեղճ հարիֆ, խեղճ ու կրակ ու ուրին կմեղա. «Էտի ի՞նչ ա, էտի իմ դուռ». կէրթա. «Էդա իմ շվաք, էդա լէ իմ կողով, էդա լէ իմ կողով շալկեցի»։ Կէրթա՞ պասմեն, խայիմ մի զուր կողով կզարդի գետին, կըսե. «Ահա, իդա լէ իմ պասմեն»։ Կշալկե գիգա զուր կողով, էմլա շվաք կթալա կողով գետին։ Կըսե. «Ան հա իդա լէ իմ շվաք»։

Գիգա, դուռ էլման կտնդտնդացու, կըսե.— Կնի՛կ, կնի՛կ, զդուռ բաց։

Կըսե.— Էն վո՞ն է, իմ իրիկս ի, հանդե պառկուկ իմ խեչ, էդ քոփակ հարիֆ վո՞ն ա օր տաս դիր գիգա կզարկվի իմ դուռ։ Ելա օր, պտի էնիմ օր շուն ըդոր ձեռքեն զհաց պըտի չառնե։

Իրիկ կփոշմնի, խեղճ ու կրակ, կթողի կէրթա, կմեղե, կըսե. «Հա, իդա իմ դուռ, իդա իմ կողով»։ Կշալկե զկողով կըսե. «Հան հա, իդա լէ իմ կողով օր ես զարկեցի»։ Կշալկե կէրթա պասմեն, կայիմ զկողով կզարդե գետին, կըսե. «Հան հա, իդա իմ պասմեն, էդ հ՚որի՞ զիս շաշ ու շիվար կհանին»։

Դուրս բուք կբռնե, հայ սև կշիվբի, կմնա, ճար մի չկա գըտնալու։ Կէրթա կմտնա խուշկնոց։ Հարի լուս կդողդղա ու կմեղա. «Էդ իմա՞լ էղավ»։

Լուսացավ։ Կնիկ դոստ կշիտկե դուս, դռներ կբանա, կդառնա. կնստի տուն, հուհու բանե խաբար չունի, սուչ կկոտրի վրեն դրռ։

Խեղճ իրիկ, կվերցու զկողով, կբերե կդնե ուր դուռ, կդոզա՝ ո՞ւյ, ո՞ւյ, ո՞ւյ վու վու վո՞ւյ։

Կնիկ կըսե.— Հա հա հո՞ւ, գացեր ես մեխանեք բախի խմելու, գացեր ես խահվա խանեք շրոթ խաղալու, կումար խաղալու, էկեր ես՝ ույ ու վույ կէնիս օր իմ ռա՞մ էրթա՞ քու վրեն։

— Առաջ լէ կէ է .....նիմ, լո՞ւ ու տո՞ւն լէ կէրթա՞մ։

— Ա՞խ, սև էլնի վրետ, գացեր ա իմ շան տեխն է նստեր է, ու կըսե. «Վո՞ւյ, ույ լուսուն լէ կէրթամ»։